քենտի զօրամասի ադրբէյջանցի հրամանատարը, իր զօրամասում ծառայող մի լեզգի զինուորի — որի վրայ կասկածում էր որպէս լրտեսի — խփել է տալիս եւ գիշերով դիակը մի քանի զինուորով ուղարկում է Խանքենտի հայկական դերեզմանատունը*) եւ այնտեղ թաղցնել է տալիս: Զեւականութեան համար յայտարարութիւն է փակցնում պատերին, որ այսինչ զինուորը երկու օր է զօրանոց չի եկել եւ այլն. իսկ միաժամանակ էլ, իր լրտեսների միջոցով տարածում է, որ հայերը անպայման խփած կը լինին:

Զօրամասի հրամանատարը վաղօրօք կոտորածի պատրաստութիւններ տեսնելով, նոյն զինուորներին — որոնք դիակը թաղցրել էին — ուղարկում է հայկական դերեզմանատնից դիակը բերել է տալիս ու դնում է Խանքենտի հայկական շուկայի խանութների առջեւ:

Դիակ բերող զինուորները, զրդռում են Խանքենտում ապրող թաթար ժողովրդին ու իրենց ընկերներին, ասելով որ այդ սպանութիւնը հայերի գործն է, որովհետեւ դիակը նրանց դերեզմանատանն են գտել: Այսպիսի ստոր զրդռութեան հետեւանքով, անմիջապէս կոտորած ու թալան է սկսւում Խանքենտում:

Խանքենտի հայ ժողովրդի մի մասը թաղնըւում է, մի մասն էլ թողնելով իր ամբողջ ունեցածը, կարողանում է փախչել մօտակայ Խնածախ հայկական գիւղը. իսկ ժողովրդի մեծ մասը կոտորւում է:

Ս. Սուլթանովը այդքանով էլ չբաւականանալով, մտածում է մի օր էլ Շուշում կոտորած սարքել:

Խանքենտի կոտորածից քսան օր չանցած, Շուշայ թրքական թաղում աշխատող հայ արհեստաւորներին, մօտ երեսուն հոգու, կոտորում են, պատճառաբանելով որ հայերը Ասկերանում մի թուրք են սպաննել:

Աւազակային խմբերը օրը ցերեկով յարձակւում են հայկական գիւղերի վրայ եւ քշում տանում նրանց անասունները:

Այս բոլորի դիմաց Ղարաբաղի հայ ժողովուրդը լուռ էր եւ չէր ցանկանում կռիւների տեղի տալ: Նրա արածը միայն այն էր լինում, որ բողոքում էր հայկական մարմիններին: Սակայն այդ բողոքներն էլ միշտ անհետեւանք էին մնում, որովհետեւ Սուլթանովը ուշադրութիւն չէր դարձնում մարմինների բողոքին:

Գաւառի հայկական մարմինները — Ազգային Խորհուրդ, զինուորական շտաբ — վերացնելու համար, Ս. Սուլթանովը, խորամանկութեամբ Շուշայ քաղաքացիներից մի պատուիրակութիւն է ուղարկում գաւառ՝ առաջարկելու Ազգային Խորհրդին եւ զինուորական շտաբին, նոր համագումար հրաւիրելու, որպէսզի մի լեզու գտնեն գաւառի հետ եւ վերջ տան անախորժութիւններին:

Գաւառի մարմինները ընդառաջ են գնում պատուիրակութեան առաջարկին եւ Յունիս 29-ին Շօշու գիւղում վեցերորդ համագումարն են հրաւիրում:

Մինչեւ համագումարի կայանալը, Բաղուի անղլիական հրամանատարը, Սուլթանովին հրաւիրում է Բաղու, անշուշտ նոր-նոր ծրագիրներ մշակելու համար:

Գաւառի մարմինները արժէք չեն տալիս Սուլթանովի բացակայութեանը եւ ճիշդ որոշուած օրը, 29-ին, 6-րդ համագումարն է տեղի ունենում:

Վեցերորդ համագումարը երկու օր անընդհատ զբաղւում է Ղարաբաղի խնդրով, 23 կէտից բաղկացած մի նախագիծ է կազմում եւ վերջն էլ, հետեւեալ որոշումն է կայացնում.

«Ղարաբաղի 6-րդ համագումարը, որ հրաւիրուած էր Սուլթանովի կողմից, այլեւս հնարաւորութիւն չունենալով երկար սպասել նրա Բաղուից վերադառնալուն, ցրւում է՝ պատրաստ լինելով նորից հաւաքուելու»:

Համագումարի կողմից երեք հոգի են ընտրւում՝ Արամայիս Տէր Դանիէլեան, Գերասիմ Խաչատրեան եւ Ռուբէն Շահնազարեան, որոնք համագումարի կողմից կազմած նախագիծը տանում են Բաղու, որպէսզի Բաղուի հայկական մարմնի հետ խորհրդակցելուց յետոյ, նախագծի մէջ յիշուած կէտերով, Ադրբէյջանի կառավարութեան հետ որոշ համաձայնութեան գան:

Որպէսզի Ադրբէյջանի կառավարութեան կողմից որեւէ բողոք չլինէր պատգամաւորնե-

*) Այս գերեզմանատունը 1½ վերստ հեռաւորութեան վրայ է գտնւում Խանքենտից: